



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

**Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

18 սեպտեմբերի 2019թ. թիվ 461

**ԼՈՒՈՒՄԱՐԶԱՅԻՆ «ԲԵՐՔԻ ՏՈՆ-2019» ՄԻՋՈՑԱՌՈՒՄ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝

**Կ ա Ր Գ ա Դ Ր ՈՒ Մ**

1. 2019թ. հոկտեմբերի 6-ին Լոռու մարզի Օձուն համայնքի Այգեհատ բնակավայրի մշակույթի տան հարակից տարածքում անցկացնել Լոռու մարզային «Բերքի տոն-2019» միջոցառումը:

2. Լոռու մարզային «Բերքի տոն-2019» միջոցառման նախապատրաստման և անցկացման համար ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել Լոռու մարզպետի տեղակալ Գ.Մարկոսյանի վրա:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

**ԱՐՄԵՆԻԱ**

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 18  
ք. Վանաձոր

**Կ Ա Ձ Մ**

Լոռու մարզային «Բերքի տոն-2019» միջոցառման աշխատանքային խմբի

- Գ.Մարկոսյան - աշխատանքային խմբի ղեկավար, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ  
Աշխատանքային խմբի անդամներ.
- Ա.Շահվերդյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության  
պետի պարտականությունների կատարող
- Դ.Մանուչարյան - մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ
- Հ.Մկրտչյան - մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսշրջության և վերլուծության  
բաժնի պետ
- Ա.Ռևազյան - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի  
և սպորտի բաժնի պետ
- Ս.Օդաբաշյան - մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետ
- Վ.Ղարսայան - մարզպետարանի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և  
ճանապարհաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
- Ս.Խառատյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության  
բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Գասպարյան - մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի  
բաժնի գլխավոր մասնագետ
- Ա.Գասպարյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության  
գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ
- Ա.Բաղդասարյան - մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության  
գյուղատնտեսության բաժնի առաջատար մասնագետ
- Ռ.Խանզադյան - ՀՀ Լոռու մարզպետի օգնական
- Հ.Հակոբյան - լրագրող (համաձայնությամբ)
- Ա.Մկրտչյան - ռեժիսոր-օպերատոր (համաձայնությամբ)

ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

9/18/2019

X 

ՅՐԱՅՐ ՊԱՊՈՅԱՆ

Հ.ՊԱՊՈՅԱՆ